Պաշտոնական ընդդիմախոս՝ բժշկական գիտությունների թեկնածու,
դոցենտ Կարեն Արմենի Մաշինյանի

Գրախոսությունը

Աննա Աշոտի Ավետիսյանի՝ «Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ» թեմայով,

ԺԴ.00.12 - ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Դիսկոլորիտներով պացիենտների ստոմատոլոգիական օգնության մակարդակի բարձրացման և ռեստավրացվող ատամների՝ առանց այդ էլ սահմանափակված բիոմեխանիկական պոտենցիալի պահպանման անհրաժեշտությունը՝ նվազագույն ինվազիվ տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև բուժման տարբեր մեթոդների արդյունավետության և անվտանգության մասին մասնագետների միասնական կարծիքի բացակայությունը, ատամների ռեզիստենտականության բաձրացման անհրաժեշտության վերաբերյալ հարցերի ամբողջական ուսումնասիրությունների, բուժման բարդությունների կանխարգելման ամբողջական սխեմաների բացակայությունը շեշտում են խնդրի արդիականությունը: Վերջինս հայցորդ **Աննա Աշոտի Ավետիսյանին** ուղղորդել է իր՝ **«Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** թեմայով ատենախոսական աշխատանքում նպատակ դնել և համեմատական վերլուծության ենթարկել ժամանակակից տեխնոլոգիաներով ատամների սպիտակեցման եղանակների կլինիկական արդյունավետությունը՝ հիմնված ազգային պատկանելության և բերանի խոռոչի ստոմատոլոգիական ստատուսի վրա: Նպատակի իրականացման համար առաջադրված խնդիրներն իրենց լուծումն են գտել Աննա Աշոտի Ավետիսյանի կողմից իրականացված և գիտական աշխատությունում տեղ գտած կլինիկական հետազոտությունների արդյունքից բխող եզրակացություններում: Հայցորդ Ա.Ա.Ավետիսյանը իրականացրել է ժամանակակից գրականության ավելի քան 140 աղբյուրների համապարփակ և մանրամասն վերլուծություն: Հեղինակը փորձել է վեր հանել առկա բոլոր խնդիրները, ինչպես նաև՝ չուսումնասիրված: Նա հստակ ցույց է տվել տարբեր հեղինակների հետազոտության արդյունքները և մանրամասն նկարագրել նրանց

դիրքորոշումները սույն խնդրի վերաբերյալ: Այս բաժնում հայցորդը ճշգրիտ ներկայացրել է տարբեր հետազոտություններ՝ արդյունքները մեկնաբանելիս պահպանելով անաչառություն: Ուստի պետք է նշել, որ գրականությունը վերլուծված և շարադրված է բոլոր ընդունված կանոններին համապատասխան: Հայցորդ Ա.Ա.Ավետիսյանը, պահպանելով բուժառուներին առնչվող բոլոր էթիկական նորմերը իրականացրել է հիվանդների հավաքագրում և հետազոտություն:

«Հետազոտության նյութը և մեթոդները» գլխում ատենախոսը հանգամանորեն ներկայացրել է բոլոր այն հետազոտությունների ընթացքը, որոնք իրականացվել և ընդգրկվել են գիտական աշխատության շրջանակներում: Նախնական հետազոտության մեջ ներառվել են ԵՊԲՀ ստոմատոլոգիական և ընդհանուր բժշկության ֆակուլտետի 952 ուսանող, որոնք տարբեր ազգերի ներկայացուցիչներ են: Նրանց շրջանում վեր է հանվել դիսկոլորիտի տարածվածությունը, այնուհետև 250 պացիենտի շրջանում իրականացվել է ատամների սպիտակեցում՝ վերլուծելով դրա արդյունքները՝ համապատասխան առաջադրված խնդիրների: Հետազոտության մեջ ընդգրկված բուժառուների նշված թիվը ընդգծում է ստացված տվյալների հավաստիությունը: Այս բաժնում հստակ նկարագրված են բոլոր մեթոդները, որոնք ոչ միայն վերարտադրելի ու հասկանալի են, այլև ժամանակակից են և ընդունելի ամբողջ աշխարհում: Բերանի խոռոչի ստատուսի գնահատումն իրականացվել է MAPI, PSR, ԿԱՀ ցուցնաիշներով, կլինիկագործիքային մեթոդներով: Արդյունքների վիճակագրական մշակումն իրականացվել է SPSS (Statistical Package for the Social Sciences) 19 փաթեթներում: Վիճակագրական մեթոդները ճիշտ են ընտրված և թույլ են տալիս ստանալ արժանահավատ արդյունքներ, որոնք ապահովել են ելք դեպի եզրակացություններ և եզրահանգումներ:

<<Հետազոտության արդյունքների քննարկումը>> բաժնում, հայցորդը հմտորեն ներկայացրել է իր կողմից ստացված արդյունքները՝ դրանք համեմատելով տարբեր հետազոտողների ստացած արդյունքների հետ: Նա հստակ ընդգծել է իր հետազոտության արդյունքների կշիռը, միևնույն ժամանակ ձևակերպել է հետագա հետազոտությունների իրականացման հիմքերը, որոնք կարող են ծառայել որպես նախադրյալներ՝ այլ ատենախոսական աշխատանքների համար:

Սեփական հետազոտությունների արդյունքներն ատենախոսը հանգամանորեն ներկայացրել է համապատասխան գլխի ենթաբաժիններում: Այս բաժինը հագեցած է աղյուսակներով, գծապատկերներով, լուսանկարներով և կլինիկական դեպքերով, որոնք ավելի պատկերավոր ու հասկանալի են դարձնում ատենախոսության արդյունքները:

Ատամների կարծր հյուսվածքների հանքայնացումը բնութագրող միկրոտարածությունների ծավալը սպիտակեցումից առաջ և հետո սահմանված ժամանակահատվածներում որոշվել է Diagnodent սարքի միջոցով, որի արդյունքների վերլուծությամբ էլ սկզբնավորվել է աշխատանքի կարևոր գիտագործնական նորույթի դուրսբերումը, այն է՝ստոմատոլոգիական ստատուսից կախված՝ բուժառուների ատամների սպիտակեցման անհատական օպտիմալ աստիճանի հաշվարկման բանաձևի մշակումը: Վերջինը հնարավորություն է տալիս ոչ միայն ճիշտ պլանավորել բուժման ծավալը, այլև սահմանում է ցուցումների ու հակացուցումների միջակայքեր:

Ատենախոսական աշխատանքի նորույթն ընդգրկում է նաև տարբեր ազգերի ուսանողների ատամների գունային գամմայի համեմատական վերլուծությունը, ստոմատոլոգիական ստատուսի և սպիտակեցումից հետո առաջացող բարդությունների միջև կորելացիոն կապի վերլուծությունը:

Իր ատենախոսական աշխատանքը Ա.Ա.Ավետիսյանը ավարտել է եզրակացություններով, որոնք արված են կատարված աշխատանքի հիմնավորմամբ և արտացոլում են ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ներկայացված գործնական առաջարկները ունեն գիտագործնական մեծ նշանակություն, քանի որ հնարավորություն են տալիս ստոմատոլոգներին՝ իրականացնելու բուժման ճիշտ պլանավորում, ինչը հնարավորություն կտա խուսափել անդառնալի բարդություններից և ապահովել բուժման կայուն արդյունք: Ընդհանուր առմամբ, ատենախոսությունը շարադրված է գրագետ, ամփոփ և հստակ ձևակերպումներով: Թույլ տվեք կատարել որոշակի հարցադրումներ ատենախոսին՝ ակնկալելով պատասխաններ եզրակացությունս ամբողջացնելու և ամփոփելու համար.

1. Ձեր կողմից ընտրվել են սպիտակեցման համար նախատեսված միջոցներ, որոնցում ակտիվ բաղադրիչը ջրածնի պերօքսիդն է: Ինչո՞վ եք բացատրում այսպիսի կազմության ընտրությունը, չէ՞ որ կան միջոցներ, որոնցում ակտիվ բաղադրամասը կարբամիդի պերօքսիդն է:
2. Ո՞րն է ատամների սպիտակեցման դեպքում ի հայտ եկող հիպերէսթեզիայի հիմնական պատճառը, ինչպե՞ս եք գնահատում ռեմիներալիզացնող թերապիայի դերը ռեաբիլիտացիոն գործընթացում :
3. Օրթոպեդիկ կոնստրուկցիաներ պլանավորելիս հաճախ անհրաժեշտ է լինում կատարել կոնստրուկցիայի հարակից բնական ատամների սպիտակեցում՝ կամ պացիենտի նախասիրություններից ելնելով, կամ ատամների դիսկոլորիտների

առկայությամբ պայմանավորված ցուցումներով: Ո՞րն է Ձեր խորհուրդը. սպիտակեցումից հետո որքա՞ն ժամանակ անց կարելի է արհեստական պսակների համար որոշել առկա բնական ատամներին համապատասխան գույն: Եվ խնդրից բխող մյուս հարցերը. քանի որ օրթոպեդիկ կոնստրուկցիաները հիմնականում երկարաժամկետ կիրառություն ունեն, իսկ բնական ատամների սպիտակեցումից հետո հնարավոր են գունափոխություններ, ապա ինչպիսի՞ ժամանակային միջակայքում կծագի անհրաժեշտություն բնական ատամների կրկնակի սպիտակեցման համար և արդյո՞ք պարբերական սպիտակեցումների դեպքում հնարավոր կլինի ստանալ նախորդ սպիտակեցմամբ ստացված գուներանգը:

Մինչ իմ եզրակացությունը ներկայացնելը, ուզում եմ կատարել կառուցողական առաջարկներ՝ ատենախոսական աշխատանքի վերաբերյալ: Ինչպես արդեն նշեցի իմ խոսքում, ատենախոսական աշխատանքի շրջանակներում կատարված լայնածավալ հետազոտությունների արդյունքում ատենախոս Աննա Աշոտի Ավետիսյանի կողմից մշակվել և սահմանվել է բանաձև, որը կարևոր նորույթ է և ունի գործնական մեծ նշանակություն՝ հնարավորություն ընձեռելով հստակորեն հաշվարկելու ուսումնասիրվող խնդրի բուժման նպատակով, ինչպես նաև էսթետիկ նկատառումներով ատամների սպիտակեցման մեթոդների կիրառման ցուցումներ, սահմանագծեր ու հակացուցումներ, ճշգրտորեն կազմելու բուժման պլան՝ ոչ միայն թերապևտիկ ստոմատոլոգիայի այլ նաև օրթոպեդիկ ստոմատոլոգիական միջամտությունների տեսանկյունից՝ կանխելով հնարավոր բարդությունները, կանխատեսելու և պացիենտին հրամցնելու բուժման ելքը՝ այն դարձնելով հստակ ակնկալելի: Ուստի առաջարկում եմ ատենախոս Աննա Աշոտի Ավետիսյանի կողմից մշակված և առաջարված բանաձևը առաջիկայում ներկայացնել արտոնագրման, որպես գյուտ՝ ձեռք բերելով հեղինակային իրավունք: Առաջարկում եմ նաև ատենախոսական աշխատանքի շրջանակներում ստացված կլինիկական տվյալների հիման վրա հրատարակել մեթոդական ուղեցույց՝ պրակտիկ ստոմատոլոգիայում գործունեություն ծավալող բժիշկների համար: Ավելորդ չէր լինի նախաձեռնել և ստեղծել նաև սմարթֆոնների համար նախատեսված հավելված, որը պարզեցված կերպով հնարավորություն կընձեռեր տվյալների ներմուծմամբ հեշտությամբ ստանալու հավաստի արդյունք և այն կիրառել գործնական բժշկության մեջ:

Եզրակացություն

Ամփոփելով խոսքս՝ պետք է նշեմ, որ Աննա Աշոտի Ավետիսյանի **«Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** ԺԴ.00.12 – ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության թեման արդիական է և ունի գործնական կարևորագույն նշանակություն՝ հիմնավորված հետազոտության վիճակագրորեն հավաստի արդյունքներով:

Ա.Ա.Ավետիսյանի ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Հայաստանի Հանրապետության ԲԿԳԿ 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոս Աննա Աշոտի Ավետիսյանը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս, բժշկական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կարեն Արմենի Մաշինյան

13.02.2026թ.

Պաշտոնական ընդդիմախոս դոցենտ Կարեն Արմենի Մաշինյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊԲՀ գիտական քարտուղար,
բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Տաթևիկ Գետևոնի Ավագյան